ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԱՐԵՎԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИА

АРМАВИРСКИЙ МАРЗ

МУНИЦИПАЛИТЕТ

С. АРЕВАШАТ

հեռ.0231-6-04-34 тел.0231-6-04-34

թիվ __84__

«__03__» ___10___ 2012թ.

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետ պարոն՝
Ա. Ղահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևաշատի գյուղական համայնքի ղեկավարի 2012 թվականի սեպտեմբեր ամսվա ընդունած որոշումն ու արձակած կարգադրությունները:

Առդիր 4 թերթ:

Արևաշատի համայնքի ղեկավար՝ /Ս. Գևորգյան /

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 8585-12
«03» 10 2012 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

«12» 09 2012թ. թիվ 23

գ. Արևաշատ

ԱՐԵՎԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ Գ. ՆԱՐԵԿԱՑԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 32 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՋԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՇԵՆՔ - ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳԱՐԵԳԻՆ ԻՎԱՆՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Արևաշատի գյուղապետարան է դիմել քաղաքացի Գարեգին Իվանյանը, իրեն պատկանող Արմավիրի մարզի Արևաշատ գյուղի Գ. Նարեկացի փողոցի թիվ 32 հասցեում գտնվող բնակավայրի տնամերձ օրինական 1000 քմ հողամասի վրա ինքնակամ կառուցված բնակելի տան և շենք- շինությունների գույքային իրավունքները վերականգնելու վերաբերյալ:

Հաշվի առնելով, որ կառույցը իրականացվել է մինչև 15.05.2001թ, հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-ն որոշման կարգով սահմանված և սույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի հոդվածի 1-ի , մաս 17-րդ կետով, << Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահանջված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Արմավիրի մարզի Արևաշատ գյուղի Գ. Նարեկացի փողոցի թիվ 32 հասցեում գտնվող գույքի նկատմամբ օրենքի ուժով ճանաչել քաղաքացի Գարեգին Իվանյանի ծնված՝ 08.11.1976թ. գույքային իրավունքները օրինական 1000 քմ հողամասի վրա գտնվող ինքնակամ կառուցված բնակելի տան և շենք - շինությունների նկատմամբ:

2.Տնամերձ հողամասի վրա գտնվող բնակելի տունը և շենք-շինություններ կառուցվել են 2000 թվականին:

3.Անշարժ գույքը բավարարում է ՀՀ 117-Ն օրենքի առաջին հոդվածով նախատեսված պայմաններին:

4.Ինքնակամ կառույցի իրականացման համար վճար չի գանձվում:

5.Անշարժ գույքը ենթակա է գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանման կողմից:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:

Գ/Պ պաշտոնակատար՝ Հ. ԲԱԲԼՈՅԱՆ

2012թվականի 12 -ի

գ. Արևաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«28» ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2012Թ. ԹԻՎ 16

ԱՐԵՎԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ ՀԱՍՄԻԿ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 159-րդ և 164-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005թվականի օգոստոսի 11-ի «Ամենամյա լրացուցիչ արձակուրդի իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների ցանկը, այդ արձակուրդի նվազագույն տևողությունը և տրամադրման կարգը սահմանելու մասին» N1384-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հասմիկ Ղազարյանի դիմումը՝

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևաշատի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ Հասմիկ Ղազարյանին 2012թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2012թվականի նոյեմբերի 1-ը ներառյալ տրամադրել 2012թվականի ամենամյա արձակուրդը 24 աշխատանքային (20 աշխատանքային 4 լրացուցիչ) օր տևողությամբ:

2. Հասմիկ Ղազարյանին աշխատանքի մեջ համարել 2012թվականի նոյեմբերի 2-ից:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ԱՐԵՎԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2012թվականի սեպտեմբերի «28»
գ.Արևաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« 28 » ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2012Թ. ԹԻՎ 17

ԱՐԵՎԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՏՆՕՐԵՆ ԶՈՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ,159-րդ և 164-րդ հոդվածներով.Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի փետրվարի 23-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի օգոստոսի 11-ի «Ամենամյա լրացուցիչ արձակուրդի իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների ցանկը, այդ արձակուրդի նվազագույն տևողությունը և տրամադրման կարգը սահմանելու N/384-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» որոշմամբ և հիմք ընդունելով Զորիկ Սարգսյանի դիմումը

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևաշատի Մշակույթի տան տնօրեն Զորիկ Սարգսյանին 2012թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2012թվականի նոյեմբերի 2-ը ներառյալ տրամադրել 2012թվականի ամենամյա արձակուրդը՝ 25 աշխատանքային (20աշխատանքային, 5լրացուցիչ) օր տևողությամբ:

2.Զորիկ Սարգսյանին աշխատանքի մեջ համարել 2012թվականի նոյեմբերի 5-ից:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2012թվականի սեպտեմբերի « 28 »

գ. Արևաշատ